ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ «ՎԱՆԵՎԱՆ» ԵԿԵՂԵՑԻ

Դեկտեմբերի 16-ին, երկուշաբթի օրը, Մարտունիում տեղի ունեցավ բավմամարդ ուխտագնացություն դեպի 10-րդ դարում Մարիամ և Շապուհ Բագրատունիների կողմից կառուցված Վանեվան եկեղեցական համալիրը, որին մասնակցում էին Մարտունու «Վանեվան» նորաբաց համալսարանի ուսանողներն ու դասախոսները, Գեղարքունյաց թեմի հոգևոր առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, հայր սուրբեր, ինչպես նաև տարբեր բնակավայրերից եկած հավատացյալներ:

Թեմի առաջնորդին ու նրան ուղեկցող հոգևորականներին համալսարանի կոլեկտիվը դիմավորեց Մարտունի քաղաքի մուտքի մոտ, աղ ու հացով: Այնուհետև կրթօջախում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ընթացքում սրբազան հայրը փոխանցեց Սմենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի օրհնության խոսքը՝ ուղղված ուսանողությանը:

Սրբազանը միաժամանակ հանդիպման մասնակիցներին բաժանեց հոգևոր գրքեր, Էջմիածնի Մայր տաճարը պատկերող գունավոր լուսանկարներ, իսկ ավելի ուշ բոլորին առաջնորդեց դեպի հինավուրց սրբավայրը: Հետաքրքիր ու հիշարժան էր հատկապես ուխտագնացությունը Վանեվան, ուր, եկեղեցուն ծանոթանալուց հետո, ուխտի եկածները մասնակից դարձան համալսարանի ուսանողների՝ ապագին ու ժողովրդին ծառայելու երդման հանդիսավոր արարողությանը, ինչպես նաև մատաղի ու պսակադրության ծեսերին: Ուխտագնացությունը, օրհնության ու վանքում ուսանողների հանդիսավոր երդման արարողությունը կազմակերպել էին «Վանեվան» համալսարանի ռեկտորատը՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի հետ համատեղ: Այն Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունման 1700-ամյակի առիթով հայոց սրբավայրերն ուխտավորաբար այցելելու առաջին բավմամարդ միջոցառումն էր, որի կազմակերպական հոգսերն իր վրա էր վերցրել համալսարանի ղեկավարությունը:

Ասենք, որ «Վանեվան» համալսարանը բացվել է այս տարի: Նորաբաց հինգ ֆակուլտետներում սովորում են 120 ուսանողներ: Պետական արտոնագիր ունեցող այս կրթօջախը գործում է Գիտությունների Սկզբային Սկադեմիայի և Հայոց փիլիսոփայական ակադեմիայի գիտական հովանավորությամբ և արդեն հասցրել է կապեր հաստատել Սոֆիայի, Սանկտ Պետերբուրգի տեխնիկական և Գերմանիայի Մանհայմ քաղաքի համալսարանների հետ, կատարել ուսանողների ու գիտաշխատողների առաջին փոխանակումները: Ռեկտոր Գագիկ Դավթյանի հավաստմամբ, հաստատությունը հետագայում կդառնա գիտա-կրթական համալիր՝ իր կազմում ունենալով նաև մանկապարտեզ ու գիմնազիա: Համալսարանում ազգալի տեղ կհատկացվի նաև աստվածաբանական կրթությանը:

ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ